

ԾԱՀԵՆ ՄԿՐՏՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՌՉԱՆՆԵՐԸ

Դարեր շարունակ Մարտունու շրջանը (Հայութինում Մյուս Հարանդ, ապա Վարանդա կոչվող գավառը) իր աշխարհագրական դիրքով երկրամասի պատմության մեջ կատարած իր բացադիկ դերով Լեռնային Ղարաբաղի հոգևոր-մշակութավին, սոցիալ-տնտեսական կյանքում կարևոր տեղ է գրավել:

Վաղ միջնադարում Արցախի եկեղեցական առաջին շինությունը կառուցվել է այստեղ: Երկրամասում լուսավորության, զիտության, քաղաքակրթության տարածման առաջին օջախը դարձյալ եղել է այդ գավառը, որը, չնայած Լեռնային Ղարաբաղի սիրոն է համարվում, ամենամեծայնին զուրկ է քնական այնպիսի ամրություններից, ինչպիսիք կան Դիզակում, Խաչենում, Զրաբերդում, և այդ պատճառով էլ շատ է ենթարկվել ավերածությունների:

Բացադիկ աշխատանք ու շիտակ մարդիկ են տեղի բնակիչները: Հենց դրանով պետք է բացատրել այն տասնյակ հին հուշարձանների ու գյուղերի գոյությունը, որոնք, մի քանի անգամ քարուքանդ արվելոց հետո, միշտ էլ վերակառուցվել են:

Ա.Մ.Ա.Ր.Ա.Ս

Լեռնային Ղարաբաղի տարածքում գյուղովող բոլոր հուշարձանների մեջ առանձնակի տեղ է բռնում Ամարասի վանքը, որն անմիջապես առնչվում է Արցախում և Ուտիքում քրիստոնության տարածման հայապատմության հետ, իսկ հետագայում

միշտ էլ եղել է երկրամասի հոգևոր-մշակութային եզակի օջախներից մեկը:

Մոլանի կամ Արցախյան հարթավայրի լեզվակերպից մեկը բլորների արանքով, Ամարաս կոչվող գետակի հունով, երկարաձգվել և դեմ է առել Խաղաղի ու Լուսավորչի ցածրադիր սարերին: Հենց այդ հարյուն լեզվակի կենտրոնական մասում է գտնվում Ամարասի վանքը:

Հստ հայ հին մատենագրության տրվյալների, դեռևս Դ դարի սկզբին Գրիգոր Լուսավորչի կողմից այստեղ հիմնադրվել է Ամարասի վանքը, որի ավարտումը կապած է Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորին եպիսկոպոսի անվան հետ: Դարի 30-ական թվականների վերջերին այն արդեն եպիսկոպոսանիս էր և իր այդ հերո պահպանեց ընդհուպ մինչև Ժթ դարը:

Ե դարում, հավանաբար Վարդանանց պատերազմի օրերին, ավերվել էր Ամարասի վանքը: Պարսից մոլեռանդ մոգերը յույլ չեին տա, որ իրենց երկրին այդքան մոտ գոյություն ունենար քրիստոնեական հշանավոր կենտրոնը: Նույն դարի վերջում հայոց Աղվանքի թագավոր Վաշագան Բարեպաշտը հիմնովին վերանորոգում է տաճարը և, գտնելով Լուսավորչի թոռ Գրիգորին եպիսկոպոսի հշարժները, բաժանում է իր տեղույթյան բոլոր թեմերին, ծավալում հավատանապատ գործունեություն: Ենթադրվում է, որ Մեսրոպ Մաշտոցը, Հայոց արևելից կողմանց համանգները գալով, հենց Ամարասից է ալսել Բայերեն գրերի տարածումը և, հասկանալի է, առաջին դպրոցն էլ բացել է Ամարասում:

Պատմաբան Լեռն Մաշտոցի՝ Արցախում կատարած լուսավորական գործունեության շրջագիծն այսպես էր պատկերացնում. «Այդ գծի արևելյան ծայրին մենք տեսնում ենք Սովորից ամենասեծ սրբավայրը, Ամարասը, որ գտնվում է Գրիգոր Լուսավորչի բոուա՛ նահատակված Գրիգորիսի գերեզմանը: Այդտեղից շրջագիծը գնում էր Դիզափայտի սրբավայրը... Այս հարավային ծայրակետն էր:

Դիզափայտից Պատմալեռն բժշկի ոխտանելով վրայով գիծն անցնում էր արևմտուք, որ Մեծառանց անտառապատ գալաքի (այժման Խաչենի) վանքերն էին և որ գործունեություն էին հաստատել Մաշտոցն ու իր աշակերտները»¹: Արարական արշավանքների առաջին շրջանում դարձյալ փորձությունների ենթարկվեց Ամարասը: Թ դարում այն վայելուն էր Դիզափի քաջ իշխան Եսայի Սրբու-Մուսեի հովանավորությունը, որի շնորհիվ էլ վերականգնվեց ու բարգավաճեց:

1223 թվականին թաթար-մոնղոլները կողոպտում են Ամարասի հարստությունները: Վանքի կողոպտված գանձերի մեջ էին նաև Դ դարի մնացած և Գրիգորիսի գալաքանն ու ՅԵ ակներով զարդարված մի ոսկեձով խաչ: Պատմագիր Ստեփան Օրբելյանի վկայությամբ՝ Հունատանի կայսեր Դեսպիս դատեր (մոնղոլ բռնագրավիշ կինն էր) առաջարկով խաչն ու գալաքանն ուղարկվում են Կ. Պոլիս: Հետագայում, մոտավորապես 1387 թվականին, Ամարասը Արցախի տասնյակ վանքերի նման ենթարկվում է լանջենմուրյան հըրսակների ասպատակություններին: Ավանդությունը պատմում է, որ Լակ-Թռամուրն իր զորքերը շարել է Ամարասից մինչև Արաքս գետը և հրամայել վանքի քարուքանդ պատերի քարերը միմյանց տալով թափել Արաքսի մեջ:

Սակայն, դարձյալ ըստ ավանդության, ասպատակիչները դեռ նոր էին հեռացել, երբ վանքը վերատին կանգնեց իր նախկին շուրջով:

Ժ Դ Դ. Երկրորդ կեսին Պետրոս Եպիսկոպոսի (Գիշեցի) շանձերով բարեկարգվում, բարգավաճում է վանքը, և նոր համար ամսանոց-վանք է կառուցվում Հերեներ գյուղում:

Դրանից հետո Խամսայի մեջիքությունների առաջին շրջանում Ամարասը վերակառուցվում և դառնում է Վարանդայի ամենանվիրական վայրերից մեկը: Վարանդայի Մելիք Շահնազար Բ-ը Ժ Ը դարում

նորոգում և պարապատում է Ամարասը: Նա կառուցում է նաև բազմաթիվ սենյակներ, խուցեր և այլ օժանդակ շինույթուններ:

Վերջին անգամ, 1858 թվականին, շուշեցիների օժանդակությամբ հիմնովին վերանորոգվում է Ամարասի վանքը: Խնչակն այս, այսպես էլ նախորդ վերակառուցվուների ու վերանորոգվուների ընթացքում նրա հին արձանագրությունների մեծագույն մասը ոչնչացել է:



Ամարաս. և. Գրիգորիս եկեղեցին (Ժ Դ դար)

Բոլորովին վերջերս եկեղեցու ներսում, արևմտյան պատի ծեփը կիսով չափ թափվելուց հետո, բացվել է արձանագրություն պարունակող մի բեկոր, որը պատի մեջ օգտագործվել է որպես շինաքար:

Մեկ ուրիշ արձանագրություն, խաչքարի բեկորի վրա, որ գտնվել է Ամարասում, ամենայն հավանականությամբ կարելի է համարել հնագույններից մեկը, ունի ՑՀԴ (925) թվականը:

Այսուել գտնված (այժմ Լեռնային Ղարաբաղի պատմա-երկրագիտական թանգարանում պահպող) այդ խաչքարի ջարդված կտորի վրա պահպանվել են թվակիր տառերը և ութ կիսատ տողերով արձանագրություն: Ահա ալն.

...ԶԻ

...ՈՐԱ

...ԻՇԵՍ

...ԵԶԻՍ ԵՔ

...ՄԱՅՐ (Ի) ՑՀԴ

(Ո) ՐԴՈՑ ԻՄ

ՑՀԴ

...ՈՅ ՇՈՐ

¹ Լեռ, Երկերի ժողովածու, հատոր 2-րդ, Երևան, 1947 թ., էջ 152:

...ՏԱՄԵՌ ԵՒ ԱԻՏԱՐԱ...

Ամարասի մոտեքրում՝ Մաճկալաշեն գյուղի թին գերեզմանատմբից գտնված խաչքարը, որը միջնադարյան քարգործության հիմնակի օրինակ է, քանդակված է 1091 թվականին «կազմող Ղազարի» ձեռքով: Գեղեցիկ պատվանդանի վրա քարձրացող խաղողի ու նուան քանդակներով հարդարված այս խաչքարը միջնադարյան հայկական զարդարվեատի լավագույն նույշներից է: Նրա արժեքն առավելապես մեծանում է նրանով, որ պահպանվել է նաև շատ հետաքրքիր մի արձանագրություն:

Ի ԹՎԱԿԱՆԻՍ ՀԱ(Յ)ՈՅ: Ը Խ: ԷՌ

ԵՍ ԱԲՐԵՀԱՍ ԵՐԵՑ ԿԱՆԳ

(Ն) ԵՑԻ: ԶԻՍ ՅԱՂԱԽԹԾ ՅԻԾԵՍԶԻՔ: ԵՍ ՂԱԶԱՐ ԿԱԶՄԵՑԻ: ԶԻՍ ՅԻԾԵՑԼՔ:

Ի Ք(ՐԻՍՈՒ) Ի Յ(ԻՍՈՒ) Ի ՏՐ:



Ամարաս. Քարգործ Ղազարի խաչքարը

Ամարասի հովտի քարգործ վարպետ Ղազարի անունը դարեւ շարունակ անհայտ էր մնում, և այս արձանագրությունը միջնադարյան հայ շինարար վարպետներից ցուցակում ավելացրեց ևս մեկ անուն:

* * *

ԺԹ դարի երկրորդ քառորդում Ամարասի վանքը որոշ ժամանակ ծառայել է որպես մաքսատուն: Այստեղ էին իշխանում Արևելքից դեսպի Ռուսաստան և Եվրոպական մի շարք երկրներ գնացող առևտրական քարավանները:

Ամարասն ունեցել է շատ հողեր, այգիներ, ջրաղացներ, ամառանցներ:

Վանքի հինգիտական արժեքը գնահատելու տեսակետից կարևոր դեր ունի նահատակ և Գրիգորիսի ստորգետնյա դամբարանը, որը գտնվում է այժմյան եկեղեցու թեմի տակ: Այն շինված է Խազակ լեռնան քարհանքից բերված սրբատաշ քարով: Դամբարանը, որի երկարությունը ներսից 3,7 մետր է, լայնությունը՝ 1,9 մետր, իսկ բարձրությունը՝ 3,5 մետր, բացի հարավյան մուտքից, ունի նաև մուտք արեւելյան կողմից, որն այժմ փակված է: Հարավային մուտքից դեպի ներք տանող աստիճանների հանդիպակաց պատին կամ վաղ միջնադարի հայկական ճարտարապետությանը բնորոշ երկրաշափական ու բուսական զարդարանքները: Դամբարանում էր գտնվում և Գրիգորիսի տապանաքարը², որը և համարվել է հիմնական ուսուատելի: Գերեզմանաքարի երեսին քանդակված են եպիսկոպոսական խոյր, գավազան և խաչ: Տապանաքարի վրա կահետևյալ արձանագրությունն:

«Դամբարան սրբուն Գրիգորիս Աղուանից կաթողիկոսի թոռին և սրբն Գրիգորի Լուսատորչի պարթեաի: Ծնեալ յամի ՅԻԲ—322, օծեալ ՅԻՆ—340 և նահատակեալ ՅԻՆԸ—348-ը Սանեսան թագաւորէն Մազգաց ի ԴԱՐԲԵՆԴ, բերեալ լԱմարաս սուրբ ճշխարս ի ձեռն ձեռնասուն սարկազաց նորին Արցախունի»³:

Ամարասի և Գրիգորիսի դամբարանը հորինվածքի նմանությամբ ավելի մոտ է Օշականում 442/43 թթ. Վահան Ամատունու կողմից կառուցված Մեսրոպ Մաշտոցի դամբարանին:

² Ս. Գրիգորիսի տապանաքարը 1858 թ. վերանորոգությունը ժամանակ դամբարանից քարձրացվել և դրվել է եկեղեցու դամբիմի հյուսիսային մասում, որ և այժմ մնում է:

³ Արձանագրությունը տպաքանակով համեմու ուժ ժամանակներից է: Այդ պատճեռով էլ և Գրիգորիս եպիսկոպոսը «ուստի Ե» կաթողիկոս, որպիսի կոչում Հայոց Արևելից կողմանց նոգեուր պետքը կրում էին 552 թվականից հետո: Տիյալ դևարում արձանագրությունը նկատի է առել և Գրիգորիսին վերաբերող համատակորյան պատմությունը:

Սուրադ Հասրաթյանն Ամարասի համալիրի ճարտարապետության քննությանը նվիրված իր մի ուշագրավ հոդվածում այն միտքն է հայտնում, թե «Հայ ճարտարապետության Դ-Զ դդ. այդ (դամբարարաների—Ը. Մ.) հետաքրքրական և արժեքավոր ստեղծագործությունների ինքնատիպության, հրանու ձևերի զարգացման էվոլյուցիայի բացահայտման գործում կարևոր դեր և հաշուակություն ունի Ամարասի ս. Գրիգորիս դամբարանը, որպես այս տիպի որոշակի թվագրված և ամենալավ պահպանված հուշարձանը»⁴:

Ամարասի ներկայիս կանգուն եկեղեցին կառուցված է (1858 թ.) կայտնագույն ֆելզիտի մաքոր տաշած քարից եռանակ բազիլիկային հորինվածքով (արտաքին չափսներն են 13,5×23,2 մ):

Սոլորասահը երկու գուգ խաչածեն մույթերով բաժանվում է երեք նավի, որոնք ծավածածկ են: Բեմի ամսիդի կողմերում կան ուղղանկյուն հատակագծով թաղակապ ավանդատներ: Վերջիններիս խորությունը մոտ 5 մետր է: Դա պատճառաբանված է բեմի տակ գտնվող ս. Գրիգորիսի դամբարանի առկայությամբ: Եկեղեցու միակ դրույ գտնվում է արևմտյան կողմում: Աղոթարանն առան լուսավորվում է պատերում բացված երեքական քարձ՝ ու լայն (դրսից՝ 1,4, ներսից՝ 2,0 մ) լուսամուտներով:

Երկթերք տանիքի վրա բարձրանում է փոքրիկ զանգակատան վեց սյունանի ուսուղան: Հետաքրքիր է նշել, որ (ինչպես երևում է նաև ավելի քան հարյուր տարի առաջ «Արարատ» ամսագրում տպագրված գծանկարից և հատակագծից) մինչև վերջին վերակառուցումը Ամարասի եկեղեցին ունեցել է երեք գմբեթանան զանգակատներ: Դրանցից ամենամեծը տեղադրված էր եղել եկեղեցու տանիքի կենտրոնում, մյուս երկուսը՝ արևելյան և արևմտյան ծայրերին:

Ուսումնասիրողները գտնում են, որ այժմյան եկեղեցին վերակառուցելիս շինարարները չեն կրկնել նախորդի հորինվածքը: Սյու մասին որոշակի նշում է նաև Ս. Զալալյանը, որը անձամբ տեսել է ԺԶ դ. կառուցած եկեղեցին: Հին եկեղեցին «...ե-


⁴ Մ. Հասրաթյան, Ամարասի ճարտարապետության համալիրը, «Լրագր ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների», 1975, № 5, էջ 51:

⁵ «Արարատ», 1872, էջ 26:

⁶ Ս. Զալալյանց, Ծանապարհորդություն ի Մեծ Հայաստան, մասն Ս., Տփոխ, 1842, էջ 196:

նել է ոչ թե եռանակ բազիլիկա, այլ գլութեավոր շենք»⁷:

Սոլորասահի հարդարանքը թե՛ ներսից և թե՛ դրսից պարզ է: Այստեղ բացառություն է կազմում արևմտյան շքամուտքի ճակատի պատրը: Մուտքի բարավորի քարը և նրանից վերև բացվող (համեմատաբար) փոքր լուսամուտն ունեն պատի ընդհանուր հարթությունից զգայինեն դուրս, իրար միացած երեսակալի, որը ճակտոնի տակ վերածվում է խաչի: Մյուս պատերը գրեթե հարդարանքից զուրկ են:



Ամարաս. սկեղեցին հյուսիս-արևմուտքից

Վաճեն ունի ուղղանկյուն հատակագծով պարապատեր, չորս անկյուններում տեղադրված կլոր բուրգերով: Պարսպի երկարությունը արևելքից արևմուտք 85 մետր է, լայնությունը՝ 59 մետր, բարձրությունը՝ 5 մետր: Պարսպների ողջ պարագծով ներսում կառուցված են տասնյակ քնակելի և օժանդակ շինություններ: Այստեղ, աղոթարանից դեպի արևելք, պարսպի ներսը

⁷ Մ. Հասրաթյան, Աշվ. աշխ., էջ 42:

բնակելի սենյակների շարքով անջատվել և վեր է ածվել երկու ներքին բակերի: Բայի արևմտյան մեծ հատվածի կենտրոնում է գտնվում համալիրի հիմնական հուշարձանը՝ ս. Գրիգորիսի եկեղեցին: Դեպի աղյուսարան են բացվում բակի բոլոր բնակելի սրահները: Սեղանատունը, վաճառոր երկարկանի գեղեցիկ շենքը տեղադրված են եկեղեցու հարավային կողմում: Արևելյան փոքր բակը ունեցել է միջան տնտեսական հշանակություն: Այստեղ են եղել վաճիքի գոմը, ախտոր, պահեստները:

Պարհապների միակ մուտքը գտնվում է հարավ-արևելյան կողմում, որը բացվում է դեպի փոքր՝ օժանդակ բակը: «Սա ունի պաշտպանական հշանակություն, — գրել է Մ. Հարդարյանը, — որովհետև ստացվում է ամրությունների երկաստիճան համակարգ և վաճիք արևմտյան, հիմնական մասը ներթափանցելու համար պետք էր հաղթահարել նոր արգելք՝ երկու բակերի միջև եղած դարբասը (այժմ քանիված է): Նման երևոյթ գոյություն ունի Սյունիքի Ժեղարի որոշ կողնական համալիրներում ևա»⁸:

ԱՄԱՐԱՍԻ ՀՈՎՃԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒԾԱՐՁԱՆՆԵՐԸ

Ամարասի բարերեր ու գեղատեսիլ հովիտն իր աշխարհագրական դիրքով շատ է համապատասխանում տեղաբնակ հայության խաղաղ-ստեղծագործական կյանքի պահանջներին: Ինչ խոսք, որ այս հանգամանքը որաշակի դեր է խաղացել Ամարասի՝ որպես մշակութային կենտրոնի բարգավաճման համար, իսկ այն էլ իր ներքին նպաստել է շրջակաբուժ ստեղծված կյանքին, կենցաղին, ստվարություններին, դրանց մասին վկայում են այն բազմաթիվ ավերակ գյուղերը, գերեզմանները, եկեղեցները և բնակավայրերը, ինչ ու հարուստ մշակույթի բնորուները, որոնք գետնի երես են ենում պատահարար, տարերայնորեն: Անցյալի այդ հուշարձաններից թեկուզ և ավերակ վիճակում առանձնապես կարողություն է ենրկայացնում Ամարաս գյուղաքաղաքը: Իր ժամանակին այն գրավել է Էջմիածին միարան Մակար եախկոպոս Բարիստարյանցի, Ե. Լալայանի ուշադրությունը: Նրանք Ամարաս գյուղաքաղաքի տեղը ցուց են տալիս վաճիք հարավային մասում⁹: Հավանական է, որ ուսումնասիրողները նկատի են ունեցել վաճիք հարա-

վային կողմում գտնվող գերեզմանատունը, որտեղ տեսանելի են հին գերեզմանաքարեր:

Սակայն պետք է կարծել, որ Ամարաս գյուղաքաղաքն ավելի ընդարձակ տարածություն է գրաղեցրել: Այդ խոշոր բնակավայրը, որի հետքերը մինչև օրս մնում են, տարածված է վաճակի պարիսպների մոտով հոսող Ամարաս գետակի աջ և ձախ աինիքներին: Բնակավայրի արևմտյան և արևելյան կողմերում կան երկու գերեզմանատուններ: Դրանցից մեկը գտնվում է Կող կոչվող տեղամասում, իսկ մյուսը՝ Կզնապատրի վրի վրա:

Ամարաս գյուղաքաղաքը Արցախի վաղ միջնադարի խոշոր և շեն բնակավայրերից մենք է եղել, որտեղ կյանքը հարատևել է մինչև ԺԶ դարը, մինչ օսմանյան Թուրքերի կողմից նրա ավերումը: Խնչակես հիշում են տեղացիները, գյուղաքաղաքից ու գերեզմանատուներից հավաքած քարերով են կառուցվել վաճիք ներկային պարիսպները, բազմաթիվ բնակարաններ, մատուռներ և այլ շենքեր: Ամարասի հովիտ շարունակությունը կազմում տարածքում կան հին, հշանավոր, բայց հետագայում ավերված շատ բնակավայրեր, որոնցից մի քանից դուրս են մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Հնասեր Հր. Բեզուարյանի կողմից կազմված տեղանուններից ցուցակում կան միջնադարյան չորս գյուղեր: «Դրանցից մեկը՝ Դարահոռը», որը հիշատակված է Մովկես Կաղանկատպացու գրքում, գտնվում է այժմյան Քարահոռն գյուղից երկու կիլոմետր դեպի արևմուտք, Ուկրիան լեռան լանջին և կոչվում է «Քյոհնա Քարահոռ շենյալ» անունով: Գյուղի ավերակների մի մասն այժմ հերկվում է, իսկ դաշտի վերին մասում պարզ երևում են շինույթունների հետքերը»¹⁰: Խաչքարերը քանդակված են անշաղակ քարերի վրա: Խնչակես պատմում են Քերթ և Քարահոռն գյուղերում, անցյալում այստեղից մշակված քարեր են տեղափոխել հիշալ գյուղերը շինարարության մեջ օգտագործելու համար: Հիմա էլ ինը Քարահոռն մոտ գտնվող լեռան կատարին գոյություն ունի հշանավոր սրբավայր: Մերկ, սակայն թեք լանջով ձգվող արահետները հանում են սարի գագաթը, որը երևում են քարուկիր պատերով մատուի հետքերը:

Հիմ Քարահոռն բնակավայրի հարեւանությամբ գյուղթյուն ունի նաև Քարավենի գյուղատեղին, որը գտնվում է հին Քարահոռնցից դեպի արևելք, այժմյան Քերթ գյուղի մոտ, Ուկրիան սարի լանջին:

⁸ Խոյնը, էջ 38:

⁹ «Արցախ», էջ 115, «Վարանդա», էջ 38:

¹⁰ «Արքան», 1974, № 2, էջ 93:

1971 թվականին հնավայրի մոտով ճանապարհ բացելու ժամանակ հայրենաբերվել են գետնաթաղ, քար ու կրով կառուցված մի շենքի մնացորդներ, որոնք դժբախտաբար, ավերված են: Այդ շենքի պատերից տարված մեծ քարերից մի քանիսը, որ դեռ չեն օգտագործվել շինարարության մեջ, պահպան են Քերթ գյուղի գերեզմանատան մոտ:

Այժմ, երբ հայտնի են այդ գյուղերի (Քարահոնիցի և Քարավենից) վայրերը, կարող ենք ասել, որ դրանք Ամարասից 3—4 կմ հեռավորության վրա գտնվող գյուղեր են եղել: Մյուս գյուղը, որ հիշատակված է Սուարել Դավիթեցու պատմության մեջ, Բրիտիսն՝ Կոլտողաշեն և Մշամնա գյուղերի արանքում:

Տեղացիները Բրիտիս անունով հին գյուղին կոչում են Պերետես: Այստեղ դեռ մընում է հին գերեզմանատունը՝ փլված մատուռով, իսկ գյուղատեղը դարձել է վարելահող, բացառությամբ մի քանի արեւտական թմբերից, որոնք փլված տներ են, ծածկված հող ու մացառով:

Ուզում ենք ճշգրտել նաև Ամարասի վանքի պատմության հետ առնչվող հին գյուղերից մեկի՝ Քոչիզի տեղադրման հարցը:

Որոշ հետազոտողներ Քոչիզի հնավայրը տեղադրում են այժման Ծովատեղ գյուղի կենտրոնական մասում: Սակայն պեսք է հանձն, որ դրանք տարբեր բնակավայրեր են եղել և գտնվում են իրարից որոշակի հեռավորության վրա:

Քոչիզի հնավայրի հետքերը երևում են Ծովատեղ և Խերիսան գյուղերից ներքև ընկած բլրալանջի վրա: Այդ մասին են վկայում այստեղի երկու գերեզմանատուները: Տապանագրեր պարունակող գերեզմանատուներից մեկը պատկանել է Մելիք-Փաշայաններին, որը մոտ է Ծովատեղ գյուղին, իսկ մյուս գերեզմանատունը, որը համեմատաբար ավելի հին է, տարածվում է Քոչիզի ավերակների մոտ:

Այժմ բոլորովին ավերակ է Մելիք-Փաշայանների դամբարանատունը՝ կարմիր եկեղեցին: Նրա արևելյան պատի մեջ, ներսից, մնում են երկու արձանագրված խաչքարերը, որոնց ընդօրինակումը ժթդարի վերջին կատարել է Ս. Բարիստաբարյանը¹¹: Քոչիզի մյուս գերեզմանա-

տան տապանաբարերը կիսով չափ թաղված են հողի մեջ:

Ամարասի ամառանցը գտնվում է Հերմեր գյուղում: Այն փոված է Ծովատեղի հարևանությամբ, Ռուկընան լեռան հարավարևմտւքում: Այստեղի եկեղեցին (ԺԷ. Դ.) Լուսավորչի անունն է կրում: Բոլորովին անհարար մնացած եկեղեցին քառամույթ գմբեթավոր բազիլիկա է, որի գմբեթի թրմուկը համարյա չի երևում շենքի արտաքին ծավալում: Պատերը շարված են սրբատաշ քարերով: Եկեղեցու երկարությունը 19, լայնությունը՝ 14, իսկ բարձրությունը՝ 8 մետր է: Ի դեպ, Ամարասի եկեղեցին ունի նույն լայնությունը, ինչ Հերմերի հուշարձանը, իսկ երկարությամբ մի փոքր ավելի է եռանակ բազիլիկա դարձելու պատճենում: Այս հանգամանքը դարձյալ հուշել է Ս. Հասրաթյանին ասելու, թե ԺԷ. Դ. «Ամարասի եկեղեցին նույնպես եղել է ցածրադիր գմբեթով, քառամույթ գմբեթավոր բազիլիկա»¹²:

Եկեղեցու հողկված 4 սլուներն իրենց վրա կրում են թաղակապ, երկթեք ծածկը: Ծինության ներսում լավ են պահպանվել բնմը, խորանները: Պատերի մեջ տեղադրված արձանագրություններ պարունակող տասնական մեծ վիմաքարերն իրենց վրա կրում են ԺԶ—ԺԷ. Դ. առանձին թվականները: Հերմեր գյուղը հարավ-արևմտյան մասում, զուալ աղբյուրի մոտ, խոյանում է մի չինարի (տընջրի) հսկա ծառ, որի տարիքը դժվար է որոշել: Բուաբան Պետրովի կարծրով, այս Մոնկայի հասակալից է: Նրա ընի շրջագիծը 12 մետր է: Չինարին ունի մի մեծ փշակ 4 մետր տրամագծով, 12 քառակուսի մետր մակերեսով: Այդ փշակի զու ստվերում ամուսնը հանգստանու են անառանները: Տանի ճյուղերն ունեն 15—20 մետրից ավելի երկարություն, իսկ բուն ծառի երկարությունը 35 մետր է: Չինարու սաղարթների շվաքի մակերեսը կազմում է ավելի քան 250 քառակուսի մետր:

Ամարասի ընդարձակ հովտի աջ մասում ձգվող լեռնաշխթայի բարձրադիր կետերում են գտնվում երկու վանքեր: Դրանցից առաջինը Մավասի վանք կոչվող եկեղեցին է (գրականության մեջ հիշվում է նաև Մամատի): Այս վանքը մինենյան ժամանակ ամրոց է եղել: Միշնադարյան այս կոթողի ամբողջ ծածկը հիմնականում կանգնած է երկուական պյուների և որմնամույթերի վրա: Եկեղեցու խորանում կա 4 գերեզմանաբարեր:

¹¹ Առաքել Պատրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896, էջ 16:

¹² «Արցախ», էջ 106—107:


¹³ Մ. Հասրաթյան, Աշվ. աշխ., էջ 43:

Մամասից ոչ այնքան հեռու ձգվող մեկ ուրիշ լեռնաշղթայի հյուսիս-արևելյան սարահարթում (այժմյան Մամեն գյուղի մոտ) է գտնվում ծոշկա վանք-եկեղեցին ($9,0 \times 6,0$ մ.): Եկեղեցու լուսամուտներն ունեն քանդակագործ երեսակամբեր: Ընթիքի ճերտում կան բազմաթիվ արձանագրություն պարունակող խաչքարեր:

Սմբարասի գեղատեսիլ հովիտը շրջափակող լեռնաշղթաների հարավային մասում վեր է խոյանում մի կոնաձև լեռ: Տեղացիների կողմից Սորբա խոյթ (սուրբ բլուր) կոչվող լեռան գլխին նոյնապես մի հին մատուռ կա, այժմ ավերակ:

ԵՂԻԾԵՒ Վ.Ա.Ն.Ք.

Ծարտարի մոտակայքում կան 5 գյուղատեղեր: Տեղացիների գտած բազմաթիվ իրերը՝ կավե և պղնձե ամանները, շենքերի հետքերը, հին գերեզմանատները, հաև այն հանգամանքը, որ տեղական բնակչությունն այդ վայրերն անվանում է «շինատեղ», հիմք են ծառայում պահելու, որ հիշյալ գյուղատեղերը երբեմնի հին բնակավայրերի մնացորդներ են:



Դ դարից մնացած խոյակ (գյուղ Ծարտար)

Ծարտարի ներկայիս մշակույթի պայմանի շինարարության ժամանակ գտնվել է Դ դարից մնացած մի հիմանալի խոյակ, որը փոխադրված է մարզային թագավորան: Դա էլ համոզիչ կերպով հաստատում է մասնակտների այն կարծիքը, որ Ծարտարում քրիստոնեության տարածման շրջանում Սմբարասի հարևանությամբ կառուցվել է մի տաճար: Սակայն Ծարտարի հնորրանների մեջ մեծ հետաքրքրություն է ներկայացնում Եղիշեի վանքը, որը գտնվում է Ղուկան՝ Ծարտար գյուղից հարավ բարձրացող լեռան գագաթին: Վանքի միակ եկե-

ղեցին արձանագրությունների մեջ կոչվում է Եղիշա Կուսի Անապատ: Եկեղեցին ուշ միջնադարի ոճին հատուկ բազիիկ է, մերսում ունի երկու պյուներ, ծածկը թաղակապ է: Բնմի երկու կողմից կան ուղանելյուն հա-



Ծարտար. Եղիշա կուսի եկեղեցու ճակատը

տակագծով խորաններ: Պատերում բացված են երեք մեծ խորշեր: Միակ մուտքը արևմտյան կողմից է: Կամարները, մուլթերը, լուսամուտների և դռան եզրերը շարված են մաքր տաշած քարից, մնացած մասեր՝ անտաշ որձաքարերով: Պատերի մեջ օգտագործված են հին շենքի բազմաթիվ քարեր, խաչքարեր, կենցաղային և այլ ձևի հետաքրքիր զարդարանդակներ, նոյնիսկ գերեզմանաքարեր, արձանագրության մնացորդներ, որոնք ավելի են քարձուացնելու, նշուած եկեղեցու արժեքը: Ներսից ծեփը մեծ մասամբ թափված է: Պահպանվել է խորանների ծեփի որոշ մասը: Հին շենքի հիմնարդման ժամանակը ստուգ հայտնի չէ: Վիմական արձանագրության համաձայն, ԺԲ դարից եղել է նշանավոր ուսուանդեղից մեկը: Հետագայում այն ավերվել է և տեղը ԺԲ դարում վերաշինվել: «Ուստա Կաքրըն շինեցի այս եկեղեցին ձեռամբ իմով...»¹⁴ (արձանագրությունը պետք է հասկանալ վերակառուցելու իմաստով): Վերակառուցմը կատարվել է 1855 թվականին, երկու կրոնավորների՝ Հովհան արենայի և իր որդեգիր փոքր տեր Հովհանի կողմից: Շինարարության արձանագրությունը գտնվում է մոտքի ճակատի քարի վրա: Եկեղեցին իրեն զանգականուն ունեցել է փոքրիկ կաթողիկե: Այժմ այն գրտենվում է կիսավեր վիճակում: Եկեղեցու ավագ խորանում թեմի տակ է գտնվում

¹⁴ «Վարամայ», էջ 47, «Անաշխարհիկ բառարան», էջ 877: «Արցախ», էջ 117:

Եղիշա Կուսի դամբարանը: Եկեղեցուն կից, քարձունքի վրա, տարածվում է փոքրիկ գերեզմանոց: Տապանաքարերի մի մասը բավականին մեծ են և լավ մշակված: Ի դեպ եկեղեցու պատերի մեջ տեղադրված խոշոր տապանաքարերի վրա քանդակված են միջնադարյան երկրագործական գործիքներ, վար ու ցանքի, հացահատիկի կալման տեսարաններ, խաղողի ողկուզներ և այլն: Այս ամենի շնորհիվ հուշարձանը հետաքրքիր է նաև ազգագրական առումով:

Քանդակները խոսում են այն մասին, որ շրջապատի բնակիչները զբաղվել են խաղաղ-ստեղծագործ աշխատանքով, հիմնականում երկրագործությամբ և այգեգործությամբ, ինչպես հիմնա:

Վանքն իր ժամանակին պարսպապատ է եղել: Ավերված պարիսպների վրա առել են թեղի, կաղճի, հացի և այլ ծառեր, որոնք իրենց հովանու տակ են առել վանական համալիրը:

